ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<19>> հուլիսի 2024թ. Ն ՄՈ/352-Ա

ք. Արմավիր

«ԱՄԱՍԻԱՅԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԹՈՐՈՍ ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Թորոս Չիլինգարյանի 2024 թվականի հուլիսի 19-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «Ամասիայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Թորոս Չիլինգարյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդ՝ 2024 թվականի հուլիսի 22-ից օգոստոսի 23-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Թորոս Չիլինգարյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Ամասիայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Ամասիայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Հասմիկ Աբելյանին:
3. «Ամասիայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Հասմիկ Աբելյանի աշխատավարձի վճարումը 2024 թվականի հուլիսի 22-ից օգոստոսի 23-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Թորոս Չիլինգարյանին աշխատանքի մեջ համարել 2024 թվականի օգոստոսի 26-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2024-07-19 16:03:37 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՄԱՐԶՊԵՏ՝ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**